

ԵՐԲ ՈՒՄ ԴՈՒ ՍԻՐՈՒՄ ԵՍ
ՍԽԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՈՒՄ

Ինչ անել երբ.....
Մաս 3

1. Ինչն է սա դժվար դարձնում

- Միրո և շնորհքի խեղաթյուրված պատկերը

«Մարդ հանդիմանողը վերջը շնորհք կգտնի ավելի քան թե լեզվովը շողոկորթողը:» Առակաց 28:23

- Քրիստոնյական կյանքի խեղաթյուրված պատկերը

«Հրաժարվեցեք ստախոսությունից: Ամեն մարդ թող ճշմարտությունն ասի իր ընկերոջը, որովհետև միմյանց անդամներ ենք:» Եփեսացիս 4:25

- Սուրբ Գրքի խեղաթյուրված պատկերը

2. Ինչու պետք է միջամտել

- Որովհետև դա նշանակում է հետևել Հիսուսի օրինակին
- Որովհետև սերը դա է պահանջում

«Անիրավության վրա չի ուրախանում, բայց ուրախանում է ճշմարտության հետ.» Ա Կորնթացիս 13:6

- Որովհետև այն մարդկանց կյանքի զարգացմանն է նպաստում

«Միրո մեջ ճշմարիտ լինելով՝ ամեն բանով աճենք Քրիստոսի մեջ, որ գլուխն է.» Եփեսացիս 4:15

- Որովհետև մենք մտածում ենք այն ամենի մասին, ինչը որ մարդկանց կյանքում վտանգված է

«Եղբայրներ՛ ը, եթե ձեզանից մեկը ճշմարտության ճանապարհից մոլորվի, իսկ մեկ ուրիշը նրան հետ դարձնի, թող իմանա, որ մեղավորին իր մոլորության ճանապարհից դարձնողը մի հոգու մահից կփրկի և մեղքերի շատությունը կծածկի:» Հակ 5:19-20

Ես ավելի շատ պետք է մտածեմ Աստծո հետ նրանց հարաբերության մասին, քան թե իմ նկատմամբ ցույց տված նրանց վերաբերմունքի մասին

3. Ես ինչպես կարող եմ օգնել
Բ Թագավորաց 12

- Պարզիր թե ինչ է խնդիրը (11:27)

Արդյոք խնդիրը ոչ սուրբգրային, անիմաստ, կամ անկարևոր է

- Հարցրու Աստծուն, թե արդյոք դու ես այն անձը, որ պետք է լուծի այդ խնդիրը (12:1)

«Անկեղծ են բարեկամի տված վերքերը. բայց առատ են ատողի համբույրները:» Առակաց 27:6

- Անձնապես լուծիր այդ խնդիրը (12:1)
- Քո մոտեցման մեջ եղիր նրբանկատ և իմաստուն, բայց և ազնիվ եղիր (12:1-7)

«Եղբայրներ՛ ը, եթե մեկը հանկարծ մի հանցանքի մեջ բռնվի, դուք, որ հոգևոր եք, նրան հեղություն հոգով հաստատեցեք: Ինքներդ էլ զգուշացե՛ք, որ դուք էլ չփորձվե՛ք:» Գաղատացիս 6:1

- Հասկացիր, որ հնարավոր է դու չկարողանաս նրանց փրկել հետևանքներից (12:7-11, 14)
- Աղոթիր, որ նրանք պատրաստ լինեն ընդունելու և ընկալելու (12:3)
- Հավաստիացրու նրանց, որ Աստված ներողամիտ է (12:13)

Տեր իմ, Ես սիրում եմ _____ այնքան շատ, որ չեմ կարող չմիջամտել: Նրան օգնելու համար տուր ինձ քաջություն, շնորհք և սեր :

Հաջորդ Քարոզի Թեման:
«ԵՐԲ ԱՍՏՎԱԾ ԱՍՈՒՄ Է ՈՉ»
Հովիվ Սարո Խաչիկեան